ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 07, 05.06.2024թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 04.06.2024թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-33/L**) Բանկի Խորհրդի 2010 թվականի փետրվարի 03-ի թիվ 05/02 որոշմամբ հաստատված Արմավիր մասնաճյուղի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-33/L
Դաս: ԾԳ
«04» հունիսի 2024թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐՄԱՎԻՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժդ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետի ժդ) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 17.05.2023.թ h 2699 (սեփականության վկայական 22052023-04-0025) և h 2698 (սեփականության վկայական 22052023-04-0042) առուվաճառքի պայմանագրերով Բանկը ձեռք է բերել Արմավիր մասնաճյուղին հարակից տարածքներ՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Բանկի Խորհրդի 2010 թվականի փետրվարի 03-ի թիվ 05/02 որոշմամբ հաստատված Արմավիր մասնաճյուղի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրեն Միհր Անանյանին ապահովել Մարզ Արմավիր, համայնք Արմավիր Արմավիր ք. Հանրապետության փողոց թիվ 6 վարչական շենքի տարածք, 6 շենք, 30 տարածք, 6 շենք, 31 տարածք հասցեներում բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Բանկի Արմավիր մասնաճյուղի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության գրանցման հետ կապված գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Գ. Հովհաննիսյան**